ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

Կոնցեռն-Էներգոմաշ ՓԲԸ-ն ԵՊՀ-ԷԱՃԱՊՁԲ-26/59 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի			
	ֆիրմային անվանումը	մակնիշը	արտադրողի անվանումը	տեխնիկական բնութագիրը
12	AmpliSize Molecular Ruler EZ Load 500 bp Molecular Ruler Quick-Load® Purple 1 kb DNA Ladder	#1708200 #1708354 N0552L	Bio-Rad NEB	Հավաքածուն պարունակում է ԴՆԹ չափման սանդղակներ, որոնք նախատեսված են ագարոզային գել էլեկտրոֆորեզի ընթացքում տարբեր չափերի ԴՆԹ հատվածների երկարության որոշման համար և ապահովում են ԴՆԹ ֆրագմենտների հստակ և վերարտադրելի վերլուծություն: Հավաքածուն պարունակում է ● 50-2,000 ազոտական հիմնային զույգ (bp) երկարությամբ (AmpliSize Molecular Ruler), ● 500-8,000 ազոտական հիմնային զույգ (bp) երկարությամբ (500 bp Molecular Ruler), ● 100-10000 (1 kb DNA Ladder) ազոտական հիմնային զույգ(bp) երկարությամբ ԴՆԹ-ի հատվածներ կարճ, միջին ու մեծ չափերի ԴՆԹ ֆրագմենտների վերլուծության համար: Պետք է պարունակի առնվազն 0.1 մկգ/մկլ կոնցենտրացիայով ԴՆԹ: -Սանդղակը նախատեսված է

				ագարոզային գել էլեկտրոֆորեզի ընթացքում ԴՆԹ-ի չափի որոշման համար և պարունակում է 50–2,000 ազոտական հիմնային զույգ (bp) երկարությամբ ԴՆԹ հատվածներ։ Սանդղակը բաղկացած է ընդհանուր առմամբ 10 էլեկտրաֆորետիկ բծերից։ Ունի մոտավորապես 50% GC պարունակություն։ Նախատեսված է մոտ 100 կիրառման համար։ -500-8,000 ազոտական հիմնային զույգ (bp) երկարությամբ (500 bp Molecular Ruler)-ը պետք է պարունակի առնվազն 0.08 մկգ/մկլ կոնցենտրացիայով ԴՆԹ։ Արտադրանքը պետք է հանդիսանա պատրաստի օգտագործման (ready-to-load) ԴՆԹ ստանդարտ, որը նախատեսված է անմիջապես գելի վրա բեռնելու համար։ Բաղկացած է 16 էլեկտրաֆորտեիկ բծերից (բանդերից)՝ 500 bp քայլով։ Առկա է հստակ ստուգիչ բանդ՝ 5,000 bp դիրքում։ Փաթեթը ներառում է նաև 1 մլ 5× նուկլեինաթթուների նմուշի բուֆեր։ Սանդղակը պետք է նախատեսված լինի մոտ 100 կիրառման համար՝ յուրաքանչյուր բեռման ժամանակ համապատասխան ծավալի օգտագործմամբ։ -100-10000 (1 kb) ազոտական հիմնային զույգ (bp) երկարությամբ ԴՆԹ չափման սանդղակը նախատեսված է ագարոզային գել էլեկտրոֆորեզի ընթացքում ԴՆԹ հատվածների երկարության որոշման համար։ Այն հանդիսանում է նախապես պատրաստված և անմիջապես օգտագործման համար նախատեսված ԴՆԹ մոլեկուլային քաշի ստանդարտ, որը թույլ է տալիս արագ և հուսալի գնահատել ԴՆԹ ֆրագմենտների չափերը։ Սանդղակը ստացվում է հատուկ պլազմիդների

				ամբողջական մարսման արդյունքում համապատասխան ռեստրիկցիոն ֆերմենտներով և ներառում է ընդհանուր առմամբ 10 հստակ տեսանելի բանդ։ 3.0 կիլոբազ երկարությամբ ԴՆԹ հատվածը ունի ավելի բարձր ինտենսիվություն և ծառայում է որպես հղումային բանդ՝ գելի վրա չափերի կողմնորոշումն ավելի հեշտ դարձնելու համար։ Արտադրանքը պետք է ներկայացված լինի անմիջական օգտագործման պատրաստ վիճակում (ready-to-load) և պարունակի արտադրողի կողմից մշակված մանուշակագույն ներկանյութ, ինչի շնորհիվ ԴՆԹ չափման սանդղակը հնարավոր է ուղղակիորեն ավելացնել ագարոզային գելի անցքերում՝ առանց լրացուցիչ բեռնման բուֆերի ավելացման։ Օգտագործվող ներկանյութը չի առաջացնում ուլտրամանուշակագույն ճառագայթման ներքո ստվերային ֆոն։ ԴՆԹ-ի կոնցենտրացիան պետք է կազմի նվազագույնը 50 մկգ/մլ։ Նախատեսված է առնվազն 750 գելային անցքերի բեռնման համար։ Փաթեթը լրացուցիչ պարունակում է մանուշակագույն բեռնման ներկանյութ (6×), առանց SDS։ Հադիպում է 1.25-ական մլ 3 սրվակներով։ Սանդղակը նախատեսված է ագարոզային գելերի 0.8–1.2% կոնցենտրացիայի միջակայքում օգտագործման համար, իսկ լավագույն բաժանումը ստացվում է 1% ագարոզային գելի դեպքում։ Արտադրանքը նախատեսված է միայն գիտահետազոտական օգտագործման համար։ Հավաքածուն ներառում է յուրաքանչյուր սանդղակից մեկական, 1 հավաքածուն համարժեք է 1 հատին։ Ապրանքը եվրոպական արտադրության, բարձր որակի։

				Ապրանքը նոր, չօգտագործված, փաթեթը չվնասված և ապահովված համապատասխան պահպանման պայմաններով մատակարարման ամբողջ ընթացքում: Մատակարարումից առաջ համաձայնեցնել պատվիրատուի հետ

ПОЛНОЕ ОПИСАНИЕ

предлагаемого товара

Концерн-Энергомаш ЗАО в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ԵՊՀ-ԷԱՃԱՊՁԲ-26/59 ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар			
	фирменное наименование	марка	наименование производителя	технические характеристики
12				